

Սարմեն Առաքելի Խաչատրյան



1975 - 1994

Ծնվել է 10.01.1975թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գործառնասում, որպես ժամկետային զինծառայող

Չոհվել է 21.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով


Հայրը՝ Առաքել Գալստյան

Մայրը՝ Սիլվա Գալստյան

Ամուսի

*Սարմենի հայրը 1978 թվականից Արփա-Սևան համաժողովրդական կառույցի անդամ էր:
Հորանի տեղամասի պետ է աշխատել Կարմրաշենի, Մարտունու, Ջերմուկի գլխակառույցներում:
Որտեան-Արփա ջրատարի հորանցքի առաջին բացողներից է:
... Չբաղված լինելով աշխատանքով, հայրը չէր նկատել որդու առնականացումը, չէր հասցրել էությանը ապրել
նրա նախասիրություններով:
Այնինչ, Սարմենի միտքը թռչում էր Արցախ:*

Կարեն Հաբեթի Մուրադյան



1975 - 1994

Ծնվել է 29.01. 1975թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող

Զոհվել է 26.04.1994թ. Հորադիզում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով


Հայրը՝ Հաբեթ Մուրադյան

Մայրը՝ Անահիտ Մուրադյան

Ամուրի

*Երազում էր ընդունվել ֆիզկուլտուրայի ինստիտուտ, մնանվել մեր մարզաշխարհի հանրահայտ մարզիկներին,
հայկական եռագույնի ներքո հանդես գալ միջազգային մրցասպարեզներում, միշտ բարձր պահել հայկական սպորտի
պատիվը: Սակայն թշնամու գնդակը կտրեց նրա կյանքի թելը և անկատար թողեց նրա նվիրական երազանքները:
1994թ. ապրիլի 26-ին Հորադիզի պաշտպանության ժամանակ 19-ամյա Կարենը հերոսաբար զոհվեց:
Ականատեսի վկայությամբ՝ նրա ձեռքերում ամուր սեղմած է մնացել հողը: Այն հողը, որի համար նա տվեց իր կյանքը...
և իր վերջին հանգրվանը գտավ Եռաբլուրում, այն նահատակների կողքին, որոնք իրենց կյանքը զոհեցին Արցախյան
հողի ազատագրման համար:*

Երվանդ Համլետի
Աղաջանյան



1973 - 1994

Ծնվել է 20.07.1973թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես
Ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ

Ձուկվել է 29.09.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով


Հայրը՝ Համլետ Աղաջանյան
Ամուրի

*Նրա նրբահյուս մատները, որոնք կոչված էին մատիտ ու վրձին բռնելու և այդ մատներով կտավին ու քանդակին
հարություն տալու, անսովոր խուտուտ առան, երբ առաջին անգամ շփվեցին մարտական զենքի սառը փողին, հետո
ամսեամիս պնդացան, կոշտացան:*

*1994թ. մարտի 7-ը շատերի համար սկսվեց ու ավարտվեց ինչպես միշտ. ոմբակոծություն, կրակահերթեր, պայթյուն,
ծուխ, հրամաններ...*

Շատերի համար, բայց ոչ Երվանդի... ականը պայթեց նրանից քիչ հեռու, ու նա ընկավ...

Սարգիս Ռուբենի
Հովհաննիսյան



1961 - 1992

Ծնվել է 22.10.1961թ., Արարատի մարզի Ոսկետափ գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ-ում, որպես 1-ին գումարտակի 2-րդ ջոկի միլիցիոներ

Չոհվել է 03.12.1992թ. Քաշաթաղում / Լաչին /, ՀՀ սահմանները պաշտպանելիս /հր.06.04.1993թ./

Հուղարկավորված է Արարատի շրջանի Ոսկետափ գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,

ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝
«Մխրագործության համար» մեդալներով

Կինը՝ Կարինե Հովհաննիսյան

Որդին՝ Նաիրի Հովհաննիսյան

Դուստրը՝ Նաիրուհի Հովհաննիսյան

*Նա զոհվեց Լաչինի մարդասիրական միջանցքի համար մղվող մարտերից մեկի ժամանակ, 31 տարեկան հասակում:
Դեկտեմբերի 3-ն էր, օր՝ դարձած պատմություն: Դուրս գալուց մոտ ահեղ մարտեր էր մղվում: Պետք էր զրավել
ռազմական կարևոր նշանակություն ունեցող բարձունքը: Թշնամին պատրաստ էր ամեն ինչ անել բարձունքը չկորցնելու
համար: Տասնհինգ հարյուրյակի դեմ դուրս էին եկել քառասուն հայ քաջորդիներ:*

Անհավասար էր մարտը, արյունոտ...

Մի քանի ժամ տևած մարտից հետո, իջնող խավարը մարտադաշտում գտավ ընկած քաջորդիներին:

Սարգիս Ժորայի Քոլոզյան



1976 - 1991

Ծնվել է 17.06.1976թ., Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆԳՎ ՄՕՀԶ-ում, որպես կապի դասակի 2-րդ ջոկի կապավոր

Չոհվել է 07.05.1991թ. Շուռնուխում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 1998թ. հրամանագրով՝ Արիության մեդալով,

ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝
«Մխրագործության համար» մեդալով

Հայրը՝ Ժորա Քոլոզյան

Մայրը՝ Ռինա Խաչատրյան

Ամուրի

... Արդեն խմորվում էր ազգային ազատագրական պայքարն Արցախում, և ի թիվս այլ քաջերի՝ Սարգիսն ու ավագ եղբայրը՝ Ժիրայրը, կամավորագրվեցին հայրենիքի սահմանների պաշտպանությանը:


Նրանք էին, որ կազմավորեցին «Դավիթ -Բեկ» կամավորական ջոկատը, որը մարտնչեց սահմանամերձ բոլոր թեժ կետերում՝ Երասխավան, Նոյեմբերյան, Մեղրի, Ղափան, Մխիհան...

Մայիսի 6-ի գիշերը թուրք ելուզակների զունդը պաշարել էր Գորիսի հեռուստաաշտարակը:

Քոլոզյանի զխավորած ջոկատին հանձնարարվեց դիմակայել...

Բայց մահը նաև ... քաջերին է տեսնում:

Մերժիկ Մելսիկի
Հակոբյան



Ծնվել է 11.05.1975թ., Մարտունու շրջանի Թազազյուղ գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես ժամկետային զինձառայող, շարքային

Չոհվել է 16.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Արարատի շրջանի Վեդի ավանում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Մելսիկ Հակոբյան
Մայրը՝ Սոֆիկ Հակոբյան
Ամուսի

1975 - 1994


Մերժիկը դպրոցական էր, երբ սկսվեց դարաբաղյան շարժումը: Մարտունու շրջանի Թազազյուղի սովորական դպրոցահասակ երեխա. քանի դեռ ավագ եղբայրները ծառայում էին բանակում, ամռանը դաշտում օգնում էր հորը, տունուղռան գործն էր անում, զբաղվում էր թեթև ատլետիկայով:

Իսկ 1993 թվականի գարնանը գորակոչվեց ներքին զորքեր: Պատանի նժդեհականն իր տարերքի մեջ էր. զենք, համազգեստ, զինվորական կարգուկանոն: Կարճ ժամանակամիջոցում օրինակելի զինձառայող ճանաչված Մերժիկ Հակոբյանի միտքը, սակայն, ռազմաճակատում էր, այնտեղ, ուր որոշվում էր բոլորիս լինել-չլինելու հարցը:...

Եվ Ֆիզուլու շրջանում էլ, հաղթական հրադադարից մի քանի օր առաջ՝ 94-ի ապրիլի 16-ին, զոհվեց Մերժիկ Հակոբյանը:

Հավերժ 19-ամյա և ընդմիջտ նժդեհական:

**Գեյն Ռաֆիկի
Գասպարյան**



1975 - 1994

Պահն էր օրհասական և նա զինվոր դարձավ հանուն մեր հողի, ջրի ...

Ծնվել է 11.05.1975թ., Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում
Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային


Զոհվել է 08.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Ռաֆիկ Գասպարյան
Ամուրի

*... Մարտունիում Ռաֆիկ Գասպարյանին բոլորն են ճանաչում: Գիտեն որպես լավ մարդու:
Գեյնը Ռաֆիկի առաջնեկն էր: Դեռևս փոքրուց աչքի էր ընկնում ուշիմությամբ:
Նոյեմբերի 20-ին իր հասակակիցներից շատերի հետ մեկնեց բանակ:
Դիմեց հրամանատարությանը՝ խնդրելով իրեն, որպես կամավորի, մյուս զինվոր – կամավորների հետ ռազմաճակատ
ուղարկել:
Հարզվեց երիտասարդ հայրենասերի դիմումը և նա մեկնեց Հայաստանի հարավային սահմանները պաշտպանելու:
1994 թվականի ապրիլի 15-ին Ֆիզուլու համար մղվող մարտերում քաջի մահով ընկավ Գեյնը*

Սամսոն Երվանդի
Կյուրեղյան



1958 - 1994

Ծնվել է 25.09.1958թ., Կոտայքի մարզի Գառնի գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ-ում, որպես 4- րդ գումարտակի
1-ին վաշտի 2-րդ դասակի հրամանատար,
միլիցիայի կրտսեր լեյտենանտ

Զոհվել է 16.03.1994թ., ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Կոտայքի մարզի Գառնի գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալներով

Կինը՝ Ալետա Չաքարյան

Որդին՝ Գագիկ Կյուրեղյան

Դուստրը՝ Անուշիկ Կյուրեղյան

*1990 թվականին, թողնելով ամանորյա սեղանը, համաջոկատայինների հետ Սամսոնը մեկնեց Գորիս, այնուհետև եղավ
Երասխում, Մեղրիում, Շուռնուղում:*

Դա շրջագայություն չէր: Ամեն մի վայրում կենաց ու մահու կռիվ էր զնում:


*Ազերիների վայրագությունների ականատեսը կմտածի՞ տունդարձի մասին, այն էլ՝ Սամսոնը, որ վիրավորված պահին
անգամ չէր մտածում վիրակապի մասին:*

Նրա գերագույն նպատակը՝ հաղթանակը օր առաջ, ժամ առաջ մոտեցնելն էր:

Նրա կյանքի նպատակը՝ վերջին լամուկին հայրենիքի օրոցքից դուրս շարտելը:

...Տարբեր մորից ծնվեցին, բայց եղբայրներ զոհվեցին

Արմեն Սահակի Մանուկյան



1975 – 1994

Ծնվել է 06.10.1975թ., Էջմիածնի շրջանի Գեղակերտ գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 16.03.1994թ. Օմարում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Էջմիածնի շրջանի Գեղակերտ գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալներով

Հայրը՝ Սահակ Մանուկյան
Ամուրի

*1993թվականի նոյեմբերի 6-ին զորակոչվեց հայրենի բանակ: Սիրում էր ծառայել հայրենիքին, քաջ,
հայրենասեր էր:*

1994թ.փետրվարի 15-ն էր, երբ մեկնեցին ռազմաճակատ:

Փետրվարի 16-ին Օմարի բարձրունքում թեժ մարտերի ժամանակ ականի պայթյունից զոհվեց հերոսի մահով:

**Ավետիք Էդիկի
Հովհաննիսյան**



1974 - 1994

Ծնվել է 25.09.1974թ., Գուգարքի շրջանի Չորագյուղ գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1034 գորամասում, որպես
Ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 26.04.1994թ. Հորադիզում, ՀՀ սահմանները
պաշտպանելիս

Հուղարկավորված է Գուգարքի շրջանի Չորագյուղ գյուղում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Էդիկ Հովհաննիսյան

Մայրը՝ Լարիսա Հովհաննիսյան

Ամուսի


Այդ իրիկուն Լարիսայի սիրտը տնքաց հանկարծ՝ մոմը ձեռքից գցեց. – Վախ, Ավետիքս...
Հաջորդ օրը բոթը եկավ:

Ոչ ոք չէր հավատում, որ լույսի պես էն տղեն, 20 տարին դեռ չբռնորած...

1994 թվականի ապրիլի 15-ին Ֆիզուլիում վերջին կռիվն էր...

*Ներքին գորքերի գորամասում զինվորներն անկյուն սարքեցին, մեծադիր լուսանկարը փակցրին պատին,
և Ավետիք Հովհաննիսյան զինվորի անունը երեկոյան հաշվառման գրքից միշտ առաջինն է կարդացվում՝
նա հավերժ շարքում է:*

Սամվել Հակոբի
Մինասյան



1965 - 1994

Ծնվել է 30.12.1965թ., Արտաշատի շրջանի Ծահունյան գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 գորամասում,
շարքային

Զոհվել է 15.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է ք.Արտաշատում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալներով

Կինը՝ Կարինե Բենիամինյան

Որդին՝ Հակոբ Մինասյան

Դուստրը՝ Լուսինե Մինասյան


*Հայրենիքի զինվորը ռազմի դաշտում առյուծ է, ամբողջովին վրեժ ու ցասում, թշնամու գնդակից նա չի սարսափում,
ձգտում է ծնկի բերել ոսխսին, ջարդել նրա թևերը, որպեսզի հաղթանակի:*

*Այդպիսին էր նաև Սամվելը, քաջարի զինվոր, որը կրակի ու բոցերի միջով հասավ անմահների Օլիմպոս
և իր անունը գրանցեց Արցախ աշխարհի համար ընկածների սրբազան մատյանում:*

Երեսունը դեռ չէր բոլորել Սամվելը, ուներ թոթովախոս երկու մանուկներ՝ Հակոբիկ և Լուսինե:

Նրան վիճակված էր՝ ամեն ինչ հանուն հայրենիքի...

Արմեն Ժորայի Մանուկյան



1975 - 1994

Ծնվել է 06.07. 1975թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 գորամասում, որպես
Ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 29.12.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Ժորա Մանուկյան

Մայրը՝ Արևհատ Զիրոյան

Ամուսի

*Դեռևս դպրոցական տարիներից ամենատարբեր հակումներ է ունեցել ՀՀ ՆԳՆ ՆՁ մոտոհրաձգային գնդի շարքային
Արմեն Մանուկյանը:*

*Սովորել է անգլերեն լեզվի խորացված ուսուցմամբ դպրոցում, զբաղվել սպորտով և երաժշտությամբ, փորձել
տիրապետել արհեստների:*


...Արմենն անընդհատ մղվում էր վերադառնալ դիրքեր, փափագում էր լինել առաջին գծում:

Նրան այրում էր վրեժի զգացումը: Նա երեք անգամ գործուղվեց ռազմաճակատ:

Նրան վիճակված էր ընկնել թշնամու նշանառու դավադիր գնդակից, այն ժամանակ, երբ արդեն կնքված էր զինադադարը, երբ դադարել էին հայ-ադրբեջանական խոշորածավալ ընդհարումները:

Չպահպանեցիր քեզ, Արամ...

Արամ Նորիկի Գալստյան



1980 - 1999

Ծնվել է 20.06. 1980թ., ք. Երևանում,

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 11.05.1999թ. Մարտակերտում, ծառայողական պարտականությունները կատարելիս

Հուղարկավորված է Մասիս քաղաքում

Հայրը՝ Նորիկ Գալստյան

Մայրը՝ Մելանյա Հովհաննիսյան

Ամուրի

«Տարիներս անցան աննկատ:


Ես արդեն 17 տարեկան եմ : Շուտով կավարտեն դպրոցը և կթևակոխեն կյանք:Մի կյանք, ուր ինձ սպասում են բազում անակնկալներ, հիասթափություններ և երջանիկ պահեր: Մի քանի օրից կլինի իմ վերջին զանգը, որը կազդարարի իմ մանկության վերջը: Ես կավարտեն դպրոցը:Ավարտելուց հետո իմ առջև դրված են բազմաթիվ անլուծելի հարցեր, որոնք պետք է անձամբ լուծեն: Սակայն կյանքի դժվարությունները ինձ հետ են պահում ճիշտ որոշումներ կայացնելուց»:

/Արամի դպրոցական շարադրությունից/

*«Գնալու եմ Ղարաբաղ, սահմանն եմ պաշտպանելու», - տեսակցություն ժամանակ հայտնել էր ծնողներին:
Եվ հայրենյաց զինվորը մեկնել էր պարտքը կատարելու, կատարել էր հավատարմորեն, բայց, այս անգամ՝ կյանքի գնով...*

Դու հրամանատար փառապանծ...

Ռոբերտ Հայկարամի Գևորգյան



1958 - 1994

Ծնվել է 01.01. 1958 թ., Նաիրիի շրջանի Քասախ գյուղում
ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 գործառնախի հրամանատար, գնդապետ
Չոհվել է 10.03.1994 թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում
Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 1996 թ. հրամանագրով՝ 1-ին աստիճանի
Մարտական խաչ շքանշանով,
ՀՀ ոստիկանության պետի 2005 թ. հրամանով՝
«Մխրագործության համար» մեդալով

Հայրը՝ Հայկարամ Գևորգյան

Մայրը՝ Ազնիվ Գևորգյան

Կինը՝ Չենֆիրա Սիրեկանյան

Որդին՝ Անդրանիկ Գևորգյան,

Դուստրերը՝ Սաթենիկ Գևորգյան, Գոհար Գևորգյան

Մշեցի քաջ պապերից սերված, վրեժի ծարավ հայորդին՝ Ռոբերտ Գևորգյանը բազմաթիվ հայ քաջորդիների նման նետվեց հակամարտության ամենաթեժ կետերը: Հատկանշական է այդ ընթացքում Ռ.Գևորգյանի կողմից զենքի և զինամթերքի հայթայթումը Հայաստանից և ԽՍՀՄ այլ երկրներից և դրանց տեղափոխումը ռազմաճակատ: 1990թ. դեկտեմբերի 25-ին Գևորգյանը ստնում է ծառայության նոր կազմավորված ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ 2-րդ մոտոհրաձգային գումարտակում, որպես վաշտի հրամանատար, որից հետո՝ շտաբի պետ, գումարտակի հրամանատար:

1988 թվականից Գևորգյանը պաշտպանական և ազատագրական մարտեր է մղել Հայաստանի սահմանամերձ Տավուշի, Սիսիանի, Կապանի, Գորիսի, Մեղրիի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Արցախի և Շահումյանի շրջանի բազմաթիվ բնակավայրերում՝ թուրք ճիվաղին հասցնելով կենդանի ուժի և տեխնիկայի կատարյալ ոչնչացում՝ ահ ու սարսափ տարածելով թշնամու շարքերում: Անմահացած լեզենդար զորահրամանատար Ռ.Գևորգյանի մարտավարության փայլուն վկայությունն է այն, որ ավելի քան 4 տարի մասնակցելով բազմաթիվ մարտական գործողությունների՝ տարել է միայն տպավորիչ հաղթանակներ:

Դու կյանք ու մահ տեսած զինվոր, ազգի համար կանգուն բերդ...

Արա Թոռնիկի Մանուկյան



1960 - 1992

Ծնվել է 25.05. 1960թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ -ում, որպես 1-ին գումարտակի 1-ին ջոկի միլիցիոներ, միլիցիայի շարքային

Չոհվել է 03.12.1992թ. Քաշաթաղում /Լաչին /, ՀՀ սահմանները պաշտպանելիս /հր. 06.04.1993թ./

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 1998թ. հրամանագրով՝ Արիության մեդալով,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝

Մխրագործության համար մեդալով

Կինը՝ Շողիկ Մելքոնյան

Որդին՝ Վահագն Մանուկյան
Դուստրը՝ Վարդուհի Մանուկյան

Մակավաթիվ ճակատագրեր կան, որոնց գոյության յուրաքանչյուր ժամն ու օրը, անգամ վախճանը՝ մարդավայել, արժանապատիվ ապրելու և մարտիրոսվելու լավագույն օրինակ է ապրողներին համար:

Չավակներից կրտսերը՝ Վահագնը, 3 տարեկան էր, երբ հայրը՝ թողնելով մարզական աշխատանքը արցախյան ռազմաճակատի ուղին բռնեց:

Արցախյան ազատամարտի, թերևս, ամենադժնի մարտերից մեկը՝ Ղոչազ բարձունքի մոտ եղավ:


1992 թվականի դեկտեմբերի 3-ն էր :

Կապիտան Էրիկի հրամանատարությամբ Արայենց փոքրաթիվ ջոկատին հանձնարարված էր գրոհել և գրավել բարձունքը:

Չոկատում միայն լավագույններն էին, իրական վտանգը գիտակցաբար արհամարհած 11 խիզախներ...

Նրա գարունը խառնվեց երկրի գարուններին...

Դավիթ Օնիկի
Չանախչյան



1974 – 1994

Ծնվել է 01.12. 1974թ., ք. Երևանում,

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 գորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 28.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Օնիկ Չանախչյան

Մայրը՝ Նինել Փանոսյան

Ամուրի


Միրում էր կարդալ «Մասունցի Դավիթ» էպոսը: Հրճվում և հպարտության զգացում էր ապրում հայ դյուցազներգության էպիկական թափից և ձգտում էր արժանի լինել իր Դավիթ անվանը:

Տարիուկես ծառայելուց հետո Դավիթին, ժամկետային ծառայության այլ զինծառայողների հետ , գործուղում են ռազմաճակատ:

Գործուղում են իր իսկ խնդրանքով...

Հայրենիքի ըմբոստ ու խրոխտ մարտիկ...

Հարություն Հովիկի Աբազյան



1973 - 1994

Ծնվել է 15.09. 1973թ., Նոյեմբերյան քաղաքում,

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 գորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 15.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է ք. Նոյեմբերյանում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Հովիկ Աբազյան

Մայրը՝ Ռիտա Ղարազյոզյան

Ամուրի

1993 թվականի դեկտեմբերի 15-ից գորակոչվեց ՀՀ ազգային բանակ: Ծառայել է ՀՀ ՆԳՆ ներքին զորքերի 1032 զորամասում: Մի քանի ամիս անց՝ 1994 թվականի ապրիլի 8-ին Հարությունը մեկնեց Ֆիզուլու ճակատ և ընդամենը 7 օր հետո՝ ապրիլի 15-ին զոհվեց մարտական գործողությունների ժամանակ:


Ո՞վ կարող է մեկնել, թե ինչ խորհուրդ ուներ 15 թիվը, որն Արագյան Հարությունին ուղեկցեց նրա ծննդյան օրից սկսած: Թերևս, միայն նա, ով որոշել էր նրա հողեղեն ու հոգևոր կյանքի ճամփաբաժանը և դեպի անմահություն տանող անցաթուղթը թվագրել ապրիլի 15-ով:

Հարությունի ծննդավայր Նոյեմբերյանը մի հզոր մագնիս էր, դեպի ուր ձգվում էին Հարությունի նման տասնյակ-հարյուրավոր երիտասարդներ: Նա տեսել էր այդ ջոկատների մարտական երթը, դաստիարակվել Ոսկեպարով:

Նոյեմբերյանի պարբերական շմբակոծությունների ժամանակ ականջալուր եղել թշնամու մահաբեր ռումբերի սուլոցին: Այնպես որ, պատերազմը Հարությունի համար մանկական խաղ չէր:

Արծիվը՝ Գեղամա լեռնաշխարհից

Մանվել Սուրենի Խոստեղյան



Ծնվել է 12.09. 1973թ., Գավառի շրջանի Սարուխան գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 20.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Սարուխան գյուղում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Սուրեն Խոստեղյան

Մայրը՝ Բնարիկ Խոստեղյան

Գավառի շրջանի Սարուխան գյուղի բնակիչներ՝ Զնարիկ և Սուրեն Խոստեղյանների 5-րդ գավակն էր Մանվելը, որը հարազատներին և համագյուղացիներին բազմիցս ուրախացրեց՝ ընթացմարտի հանրապետական առաջնություններում հաղթող ճանաչվելով:

...Ֆիզուլիում ճակատային գծի երկայնքով ձեռնարկվեցին հրթիռային և հրետանային գրոհներ: Հերթական գրոհներից մեկի ժամանակ, դիրքային մարտերում մահացու վիրավորվեց Մանվելը՝ 21-րդ գարունը դեռ չբոլորած զինվորը, որին մարտական ընկերները «Զլոս» էին «մկրտել»:

Գարիկ Ստեփանի Սարիբեկյան



1975 – 1994

Ծնվել է 19.08. 1975թ., ք. Գյումրիում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 գորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 25.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Գյումրի քաղաքում

ՀՀ Նախագահի 2001թ հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Ստեփան Սարիբեկյան

Մայրը՝ Լաուրա Գրիգորյան

*«...ամուսնուս մահից հետո երկու որդիներիս հետ մնացի ինքնաշեն տնակում, որը չուներ ոչ մի հարմարություն:
Հենց այդ տնակից էլ որդիներս գնացին ծառայության :*


*Գարիկը միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակեց գեղարվեստի ուսումնարանի քանդակի բաժնում,
մեծ սիրով փոքրիկ խաչքարեր էր քանդակում:*

Դեռ չէր ավարտել ուսումնարանը, երբ հազավ զինվորական հագուստ:

*Որդեկորույս մոր աչքը շարունակ դռանն է, թվում է, ուր որ է կրացվի այն և լռության դատապարտված խորճիթը
նորից կյանք կառնի:*

/Մոր նամակից/

Մաթևոս Միշայի Հակոբյան



1975 – 1994

Ծնվել է 07.12. 1975թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 16.02.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Միշա Հակոբյան
Մայրը՝ Վալյա Ավետյան

Ամուրի


*...Համբերատար սպասումով հեռվից-հեռու
Ես լսում եմ Հաղթանակի գավաթների զրնգոցը,
Ու լցվում է իմ գավաթը կապույտ-կապույտ
Մի անհայտով...*

*Եղել է ուսման առաջավոր, օրինակելի, ընկերասեր, կարգապահ: Միրում էր պարապել իրենց դասարանի թույլ աշակերտների հետ:
Նրանք երեքն էին, երեք անբաժան ընկերներ: Նրանցից Գրիգորն իր 24-ամյակը նշեց խրամատներում ու մի քանի օր անց՝
ընկավ հերոսի մահով, իսկ Մաթևոսի ու Նորիկի 19 տարին անգամ չէր բոլորել...*

*Չորամասի հրամանատարության միջնորդությամբ և ՆԳ նախարարի հրամանով երեք հերոսների անմահ անունները
հավերժ մտցվել են զորամասի անճնակազմի ցուցակի մեջ և ամեն օր անվանական ժամանակ կարդում են.*

- Շարքային Գրիգոր Մխիթարյան
- Շարքային Մաթևոս Հակոբյան
- Շարքային Նորիկ Դազարյան...

**Գրիգոր Ռաֆիկի
Մխիթարյան**



1970 - 1994

Ծնվել է 06.02. 1970թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 16.02.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Ռաֆիկ Մխիթարյան


Մայրը՝ Դոնարա Գևորգյան

Ամուսի

...նրանք երեքն էին, երեք անբաժան ընկերներ:

*Նրանցից Գրիգորն իր 24-ամյակը նշեց խրամատներում ու մի քանի օր անց ընկավ
հերոսի մահով, իսկ Մաթևոսի ու Նորիկի 19 տարին անգամ չէր բոլորել...*

Նորիկ Անդրանիկի Դագարյան



1975 – 1994

Ծնվել է 28.05. 1975թ., ք. Սևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 20.02.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Սևան քաղաքում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Անդրանիկ Դագարյան

Մայրը՝ Վիկտորիա Դագարյան

Ամուսի

*Տղերքը կոչում էին հերոսաբար, մեկը թշնամու 5-6-ի դեմ: Յոթ հայորդիները մարտնչել են մինչև վերջին փամփուշտը:
Թշնամին տվել է առնվազն երկու տասնյակ միայն սպանված, գերի վերցվել երկու մոջահեդ:*

Ցավոք, մեր յոթ քաջերից երեքը գոհվեցին, երեքը՝ ծանր վիրավորվեցին:

*Նրանք երեքն էին, երեք անբաժան ընկերներ: ... Երեք հերոսների անմահ անունները հավերժ մտցվեցին զորամասի
անձնակազմի ցուցակի մեջ և ամեն օր անվանականի ժամանակ կարդում են.*

շարքային Գրիգոր Մխիթարյան, շարքային Մաթևոս Հակոբյան, շարքային Նորիկ Դագարյան...

Ի պատասխան զրնգում է հերթապահի ձայնը.- Ընկել են հերոսի մահով հայրենիքի սրբազան սահմանները պաշտպանելիս :

Գագիկ Հովհաննեսի Ստեփանյան



Ծնվել է 26.12. 1967թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 2-րդ գումարտակի 1-ին ջոկի միլիցիոներ, միլիցիայի ավագ

Ջոկվել է 16.03.1994թ. Քելրաջարում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ԼՂՀ կառավարության կողմից 1994թ. պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, 2004թ. ՀՀ նախագահի կողմից «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալով

Կինը՝ Մարինա Շահինյան

Դուստրը՝ Նարա Ստեփանյան

1967 - 1994


Գագիկն ուժեղ էր թե հոգեպես, թե ֆիզիկապես: Նա սպորտի վարպետ էր, բռնցքամարտի Հայաստանի եռակի չեմպիոն: Անշուշտ, որդուս բնավորության ձևավորման գործում վճռական դեր է խաղացել նաև իմ հայրենի գյուղը՝ մարշալների օրրան Չարդախլուն: Հիշում եմ նրա վերջին խոսքը՝ մայր, Քարավաճառ Քելրաջարից հետո պիտի ազատագրենք նաև Չարդախլուն: Ես իմ հաղթական, հեթանոս պապերի ցավը տանեմ, ասում էր նա, տղամարդ եմ եղել, աշխարհ են դրդացրել, արևապաշտ թե կրակապաշտ են եղել, բայց իրենց հայրենիքի տերն են եղել: Ես իմ ծովից ծով Հայաստանի ջրի կաթիլներին մեռնեմ...

Հավանաբար, այսպիսի դատողությունների համար է որդիս «հեթանոս» մականունը ստացել:

/Մոր հուշերից/

Երկրի սահմանն այնտեղ է, ուր հասել է զինվորի ոտքը

**Ռ-աֆիկ Մանուչարի
Համբարձումյան**



1 9 7 3 - 1 9 9 4

Ծնվել է 14.12. 1973թ., Արտաշատի շրջանի Գետազատ գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 գորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 03.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է Արտաշատի շրջանի Գետազատ գյուղում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Մանուչար Համբարձումյան

Ամուրի

*Գետազատ գյուղի բնակիչ Ռ-աֆիկ Համբարձումյանը մեկն էր այն բազում երիտասարդներից, որոնք արցախյան
պատերազմում չխնայեցին իրենց՝ հայրենիքի ազատագրության ու պատվի համար:*

*Նա ընդամենը 21 տարեկան էր: 1994 թվականի հունվարին զինվորների մի մասը կամավոր մեկնեց Արցախ՝
մանակցելու հերոսամարտին:*

Նրանց հետ էր նաև Ռ-աֆիկը:

1994 թվականի մարտի 3-ին Ֆիզուլիում իր ծառայողական պարտքը կատարելիս, հերոսաբար ընկավ Ռ-աֆիկը՝

Էրիկ Ռոմիկի
Մարգարյան



1 9 6 7 -

Ծնվել 02.01.1967թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՕՀԶ-ում, որպես 1-ին գումարտակի հրամանատար, միլիցիայի կապիտան

Անհայտ կորել է 03.12.92թ. Քաշաթաղում / Լաչին /

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 1998թ հրամանագրով՝ Արիության մեդալով,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝
«Մխրագործության համար» մեդալով

Հայրը՝ Ռոմիկ Մարգարյան

Մայրը՝ Ռուզաննա Բադալյան

*...Դեռ դպրոցական տարիներից ձգտում էր զինվորական դառնալ:Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվեց
Լենինգրադի ՆԳՆ բարձրագույն զինվորական քաղաքական ուսումնարան:*

1990 թվականին,ՄՕՀԶ-ի կազմավորման առաջին օրից զինվորագրվեց հայրենի հողի պաշտպանությանը:

Նույն թվին էլ ընդունվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 2-րդ կուրս:

Մարտական ուղին սկսվեց Գորիսից և շարունակվեց Երասխ, Վարդենիս, Իջևան,Արծվաշեն...

Ընկերական շրջապատում նրան «Շուռնուխի Էրիկ» էին ասում, որովհետև անընդմեջ այնտեղ էր:


Նույնիսկ սիրահարվել էր տեղացի մի աղջկա և արդեն ամուսնանալու մասին էր մտորում:

*Պոչագ սարի մոտ ղեկտեմբերյան այդ առավոտ պատահականությունն անգամ չէր կարող փրկել իրադրությունը,ազդել
մարտի ելքի վրա:*

Այդ առավոտ խիզախ հայորդիներից շատերը զոհվեցին: Այդ մարտում անհայտ կորավ ՄՕՀՁ-ի լավագույն սպաներից մեկը՝ կապիտան Էրիկ Մարգարյանը: Նրա լուսավոր անունն ակնածանք ու հարգանք է ներշնչում, նրա անբիծ վարքն ու սպայական արժանապատվությունը, հայրենասիրությունն ու արիությունը՝ օրինակ դարձան զինակիցների համար:

Քո մեծ սերը՝ հայրենիքը...

Վարդան Բորիսի Բալասանյան



1969 - 1991

Ծնվել է 09.07.1969թ., ք. Ստեփանակերտում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 4-րդ գումարտակի միլիցիոներ, միլիցիայի սերժանտ

Զոհվել է 29.07.1991թ. Վարդենիսում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Կարմիր բլուր» -ում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար»
մեդալներով

Հայրը՝ Բորիս Բալասանյան
Մայրը՝ Ջեմֆիրա Բալասանյան

1991թվականի հուլիսի վերջերին էր:

Ջոկատի հրամանատարության ցուցումով մի խումբ մարտիկներ մեկնեցին հետախույզության:


Խմբի մեջ էին մարտիկներ Վարդան Բալասանյանը, Արմեն Պապյանը, Նշան Գրիգորյանը և ուրիշներ:

Կոշարուլաղ սարի վրա հետախույզների խումբը ընկավ թշնամու շրջափակման մեջ:

-Մի քաջ հայորդի էր մեր Վարդանը, որին ջոկատի տղաները «Ռենթո» մականունով էին կնքել:

Մեր սրտերում դու ապրում ես հավերժ սիրով անմռաց...

**Արմեն Վլադիմիրի
Ջավախյան**



1 9 6 5 – 1 9 9 2

Ծնվել է 07.10.1965թ., Ալավերդու շրջանի Շնող գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 4-րդ գումարտակի միլիցիոներ, միլիցիայի կրտսեր սերժանտ

Զոհվել է 02.09.1992թ. Շուռնուխում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության, ՀՀ ոստիկանության պետի 2005թ հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալներով

Հայրը՝ Վլադիմիր Ջավախյան
Մայրը՝ Լիդա Ջավախյան
Որդին՝ Վլադիմիր Ջավախյան

Հաճախ ինքնամփոփ մարդիկ ավելի վճռական քայլերի են ընդունակ, քան կարելի է սպասել:

Այդպիսին է եղել ՆԳՆ միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի զինծառայող, կրտսեր սերժանտ Արմեն Ջավախյանը:


Սահմանի վրա կռվելը պատվի հարց էր նաև Արմենի համար: Եվ նա պատվով մասնակցեց Քաշաթաղի, Նոյեմբերյանի և Արծվաշենի պաշտպանական մարտերին:

1992 թվականն էր: Թշնամին անընդհատ լարվածության մեջ էր պահում Գորիսի Շուռնուխ բնակավայրը:

Ազերի հրոսակները «Գրադ» կայանքներից 2-3կմ հեռավորության վրա հրետակոծում էին գյուղի միջնակարգ դպրոցի տարածքը:

...Արմենը որոշեց տեղաշարժվել՝ գուցեև կրակն իր վրա վերցնելու նպատակով... Բայց ահա մոտերքում պայթեց «Գրադի» հրթիռը, որը վիրավորեց նրան գլխից:

Սարգիս Կիմիկի
Բաղիշյան



1968 – 1994

Ծնվել է 23.09. 1968թ., ՎՀ , Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես արագ արձագանքման և առանձին «Թայֆուն» գումարտակի հրաձիգ, միլիցիայի շարքային

Չոհվել է 25.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս Հուղարկավորված է Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության, ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալներով

Կինը՝ Գոհար Սահակյան
Դուստրը՝ Լիդա Բաղիշյան
Դուստրը՝ Լիլիթ Բաղիշյան

Սևաշյա հայորդին, որ կրում էր Մեծ Հայրենականում հերոսաբար զոհված իր հորեղբոր՝ Սարգսի անունը, ընտանիքում վեց քրոջ միակ եղբայրն էր: Որպես զինվոր մկրտվել էր աֆղանական մարտերում:

Աներևակայելի օրեր էր ապրում հայոց աշխարհը՝ ազգային ոգու նոր վերելք՝ ազատագրական շարժում, արցախյան մարտեր իր հողի ու իրավունքների տեր դառնալու հստակ ընկալում ու վճռականություն: Այս ամենի հանդեպ հայրենասեր երիտասարդն անտարբեր չէր կարող մնալ: Ու մի օր էլ ծնողներին վճռականորեն ասաց, որ գնում է Արցախ՝ թուրքերի դեմ կռվելու: Չինեղբայրների բնութագրմամբ՝ Սարգիսն իր խիզախությամբ ու մարտավարական հմտություններով շատ էր տարբերվում մյուսներից: Աֆղանական պատերազմն իրոք կռել-կռվել էր

*Արան և այժմ նա իր իսկական՝ «զինվորի» դերի մեջ էր: Ֆիզուլու ահեղ ու ողբերգական մարտերն էին:
...Այստեղ էլ ավարտվում է Սարգսի մարտական ուղին...*

Նա պիտի կռվեր էլի ...

**Գարեգին Սերյոժայի
Բաղդասարյան**



1957 - 1991

Ծնվել է 24.10.1957թ., ք. Երևան

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 3-րդ գումարտակի
հրամանատար , միլիցիայի կապիտան

Զոհվել է 20.07.1991թ.Վարդենիսում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ հրամանագրով՝ Արիության մեդալով,

ՀՀ ոստիկանության պետի 2005թ հրամանով՝ «Մխրագործության համար»
մեդալով

Կինը՝ Շամամ Բաղդասարյան

Դուստրը՝ Էլեն Բաղդասարյան

Դուստրը՝ Տաթևիկ Բաղդասարյան

Դուստրը՝ Մարիամ Բաղդասարյան

*Հատուկ նշանակության ջոկատի գործունեության հենց առաջին օրվանից Գարեգին Բաղդասարյանը զինվորագրվեց քաջերի
այդ զնդին: Հետո մարտումի օրերը հաջորդեցին իրար: Ավագակային զինված խմբերի վնասազերծման ու զինաթափման
օպերացիաներ Երևանում, Մասիսում... մարտեր սահմանամերձ գոտում՝ Գորիս, Նոյեմբերյան, Սեղրի, Տաշիր, Վարդենիս:*

*ՄՀՆՁ-ի շտաբի պետ, միլիցիայի կապիտան Գարեգին Բաղդասարյանի զխսավորությամբ հսկվում էր Վարդենիսի ամբողջ
սահմանը՝ Սոթքից մինչև Մարտունու սարերը: Հուլիսի 20-ն էր:*


...- Իմ մոտ ընկերն էր, իմ գործընկերը,-ասում էր ՆԳ փոխնախարար Հայկ Հարությունյանը,-ազնվագույն տղամարդ էր, վեհ, ուժեղ, բարի: Այսօր մեզ, մեր ազգին, մեր հայրենիքին շատ են պետք նմանները:

Լավագույն տղերքը... ազգի հոգին, հերոս արծիվներ... մենք պարտք ունենք նրանց, և հուշարձաններ կանգնեցնելուց բացի, նրանց ուխտը պիտի իրագործենք:

Այն ուխտը , որի համար ընկան...

*Դու ընկար... բայց քո արյունն անարատ՝
հոսում է մեր երակներում...*

Արթուր Ռուբենի Հակոբյան



1972 – 1994

Ծնվել է 30.12.1972թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ-ում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 16.03.1994թ. Քելբաշարում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության, ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալներով

Հայրը՝ Ռուբեն Հակոբյան
Մայրը՝ Վերժինե Հովհաննիսյան
Կինը՝ Արաքսյա Ադամյան
Որդին՝ Գոռ Ադամյան


Մարտի 16-ին Օմարի լեռնանցքի կարևորագույն բարձունքներից մեկի պաշտպանության ժամանակ, թշնամին արճճե հեղեղի պես գրոհեց հայդուկների վրա: Սակավաթիվ հայորդիները դիմացան անսպասելի գրոհին և իրենք իրենց հերթին դիմեցին սրընթաց գործողությունների:

Հինգ ժամ տևած թեժ մարտի ժամանակ թշնանու նենգ զնդակը վիրավորում է Արթուրին:

*...Կանգ առավ ժամանակը «Եռաբլուրում», ուր իշխում է հավերժության օրենքը:
Եվ այժմ Արթուրի որդին միշտ հպարտությամբ կկրկնի իր հոր խոսքերը.-Չի մեռնի այն ազգը, ով պաշտել և խոնարհվել գիտի իր
սուրբ նահատակներին, և իր միջից չի ջնջել պատմությունն իր:
Նրա զենքը արդեն ընկերների ձեռքին է: Եվ նրա գործը շարունակվում է:*

Մնավն է իմ Ավարայրը...

Արթուր Հուրմիկի Գրիգորյան



1973 – 1994

Ծնվել է 11.10.1973թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1033 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 16.03.1994թ. Օմարում, ՀՀ սահմանները
պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Հուրմիկ Գրիգորյան


*1992 թվականին ծառայության է ընդունվել ՀՀ ՆԳՆ ներքին զորքերի վարչության ՄՀՆՁ-ի զորամասում:
Չոհվել է 1994 թվականի մարտի 16-ին Օմարի լեռնանցքում:*

*Հարկավոր էր դոնկիխոտյան ասպետականություն, որով Արթուրի արյան բջիջները ներծծված էին լիովի:
Ահա թե ինչու, մարտի 16-ի առավոտյան, հրամանատարին խնդրեց անփորձ, նորելուկ ընկերոջ փոխարեն դիրք
բարձրանալ:*

Ահա թե ինչու նա, հենց նա՝ թշնամու կրակահերթի միջով գնաց ճամբար՝ փանփուշտ ու գնդացիք բերելու...

*Լավագույն տղերքը... ազգի ոգին են
Հ.Հարությունյան*

Ղուկաս Նորելի Աբգարյան



1968 – 1992

Ծնվել է 05.04.1968թ., Էջմիածնի շրջանի Աղավնատուն գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 1-ին գումարտակի 1-ին վաշտի
2-րդ դասակի 2-րդ ջոկի միլիցիոներ, միլիցիայի սերժանտ

Չոհվել է 03.12.1992թ. Քաշաթաղում /Լաչին /, ՀՀ սահմանները
պաշտպանելիս /հր. 06.04.1993թ./

Հուղարկավորված է Աղավնատուն գյուղում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար»
մեդալներով

Հայրը՝ Նորել Աբգարյան
Մայրը՝ Ամալյա Աբգարյան

Ամուրի

Ամայյա և Նորել ծնողները հայարտանում էին իրենց անդրանիկ որդով: Դուկասը նրանց սիրելին էր, գուրգուրված ու հոգածությամբ շրջապատված:

Նա խելացի և ուշիմ էր, միշտ ուշադիր և ականջալուր բոլորի նկատմամբ:

Իր ծննդյան 25-րդ տարեդարձին Դուկասը տանը չէր:

Իր մարտական տասնմեկ ընկերների հետ առաջադրանք էր ստացել պաշտպանել սահմանամերձ բարձունքներից մեկը:

Մեծաքանակ ու լավ զինված թշնամու դեմ հերոսաբար կռվեցին մինչև վերջին մարտիկը:

Կրակը վերցնում են ինձ վրա...

Արթուր Համլետի Ներսիսյան



1969 – 1992

Ծնվել է 01.08.1969թ., Արտաշատ քաղաքում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ –ում, որպես 1-ին գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի 2-րդ ջոկի միլիցիոներ, միլիցիայի սերժանտ

Չոհվել է 03.12.1992թ. Քաշաբաղում / Լաչին /, ՀՀ սահմանները պաշտպանելիս /իր. 06.04.1993թ./

Հուղարկավորված է Արտաշատ քաղաքում

Պարգևատրվել է.


ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրազործության համար»
մեդալներով

Կինը՝ Չարինե Մնացականյան
Որդին՝ Համլետ Ներսիսյան

*«Նրանք այնտեղ են ... Իսկ այնտեղ միայն ազնիվ մարդիկ են, Աստծո և Ժողովրդի սիրեցյալները»:
Ղարաբաղյան շարժման սկզբին քանակում էր ծառայում, ծանր տարավ սումգայիթյան եղեռնը, ուզում էր
անպայման վրեժ լուծել զոհված եղբայրների համար:
Երբ գորացրվեց, շարունակ միտքը Ղարաբաղի կողմն էր, ուր թողել էր Հովիկ ընկերոջը:
... Երևանի միլիցիայի հատուկ օպերատիվ ջոկատի անդամ դառնալու հանգամանքը օգնեց նրան վերջապես
իրագործելու իր ցանկությունը:
Կամավոր գնաց Լաչին:*

... Բարձունքը մերն է, տղերքը՝ չկան

Կարեն Արսենի Բլղոյան



Ծնվել է 18.10.1974թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 11.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները
պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Արսեն Բլղոյան

Մայրը՝ Թագուհի Բլղոյան

Ամուսի

1974 - 1994


1993 թվականի հունիսին ժամկետային զինծառայության կանչված Կարենին զինկոմիսարիատում անմիջապես նկատեցին և զնահատեցին:

«Չյոսինմոն» կարատե դո հանրապետական դպրոցի սան, կապույտ գոտի 6-րդ դանի տիտղոսակիր մարզիկին ծառայության ուղարկեցին ՆԳՆ ՆՁ հատուկ նշանակության ստորաբաժանում:

...Կռվում էր առյուծի նման, անահ, ասես մարտադաշտում չէր, այլ՝ խաղահրապարակում:

Խոնարհվենք շիրիմներին մեր հերոսների, արժանի լինենք նրանց իղձերին...

Արմեն Ռազմիկի Պողոսյան



1968 - 1994

Ծնվել է 07.02 յել է ՀՀ Ն.1968թ., ք. Երևանում

Ծառա ԳՆ ՆՁ թիվ 1031 գործառնաում, որպես 4-րդ
գումարտակի, 1-ին վաշտի , 2-րդ դասակի հրամանատար, սերժանտ, հետմահու
լեյտենանտ

Զոհվել է 18.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները
պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Կինը՝ Դոնարա Քամայան

Դուստրը՝ Նոնա Պողոսյան

Հայրը՝ Ռազմիկ Գուրգենի Պողոսյան

Արմենը վերադարձավ հատուկ ջոկատ, մարտական ընկերների մոտ:

*Խառը ժամանակներ էին: Թուրքը սպառնում էր նորից փակել Արցախը Մայր Հայաստանին միացնող կյանքի
ճանապարհը:*

*Արմենն ընկերներին վերցրած հասավ Լաչին:
Մի քանի լուրջ հակահարվածը բավական էր, որպեսզի ազերիները հաշտվեին Լաչինն ընդմիջտ իր
խսկական տիրոջը թողնելու գաղափարի հետ:
Կյանքի ճանապարհը գործում էր անխափան:*

Ո՞վ, եթե ոչ իմ զավակը...

Արմեն Արարատի Մելքոնյան



1 9 7 4 – 1 9 9 4

Ծնվել է 21.10.1974թ., Կրասնոսարի երկրամասի Նեֆտեգորսկ ավանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 26.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Արագածոտնի մարզի Ագարակ գյուղում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Արարատ Մելքոնյան
Մայրը՝ Չարխալան Դազարյան
Ամուրի

*Մասուն աշխարհի Արծվիկ և Շեն գյուղերից գաղթած, Թալինի շրջանում բնակություն հաստատած Դազարյանների և
Մելքոնյանների նախնիք ի՞նչ իմանային, որ մի օր խաշնարած խուժանի հետնորդների դեմ-հանդիման գեները ձեռքին
կանգնելու է իրենց ժառանգորդը:*

Մասունցու հոգում երբեք կորուսյալ չհամարվող «Մեծ Էրզրի» կարոտի կրակն էր ստիպում մինուճար Արմեն որդուն նազնաճակատ ուղարկած մորը՝ Չարիկին, գյուղամիջում հանդիմանել որդիներին դժկամությամբ քանակ ուղարկող համազյուղացիներին:

... Պատերազմը ժողովուրդների աստվածների գոտենարան է

Արթուր Արմիկի Փինաչյան



1967 - 1994

Ծնվել է 12.11.1967թ., Չովունի գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1035 գորամասում, որպես 1-ին վաշտի հրաձիգ, ենթասպա

Չոհվել է 13.01.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Նաիրիի շրջանի Չովունի գյուղում

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Արմիկ Փինաչյան

Կովեց Լաչինում, Մարտակերտում, Քելրաջարում, Շուշիում ...

Ֆիզուլին վերջին կայարանն էր, 1994-ի հունվարի 13-ը՝ կյանքի վերջին լուսաբացը:

Ամուսնացած չէր: Սպասում էր այն հրաշք աղջիկը, համոզված էր, որ ճուտը ուժեղ է և ճարպիկ, որ նրան գնդակ չի դիպչի...

...Մարդկային հոսքը բարձրանում էր քարե աստիճաններով: Բլրակի վրա զովուները յոթ արծիվները՝ Ռուբիկը, Ջիվանը, Արթուրը, Գեղամը, Ռոմիկը, Տիգրանը, Արթուրը /ճուտը/ սպասում էին:

*Նրանց շիրիմներին թարմ ծաղիկներ դրեցին: Ասես գարունը շտապում էր նրանց համար:
Ամենամյա այս երթը այնուհետև ավանդական դարձած մարզական հանդեսի վերածվեց:
Այն նվիրվում է Հայաստանի և ԽՍՀՄ չեմպիոն բռնցքամարտիկ Արթուր Փինաչյանի հիշատակին:*

Արսեն Սպարտակի Մելիքյան



Ծնվել է 28.08.1962թ., ԼՂՀ, ք. Մարտունի

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1035 զորամասում, որպես ավտոծառայության պետ, լեյտենանտ

Զոհվել է 10.11.1994թ. Սիսիանում, ծառայողական պարտականությունները կատարելիս

Հուղարկավորված է ք. Արովյանում

Կինը՝ Անահիտ Մելիքյան
Դուստրը՝ Նարինե Մելիքյան
Դուստրը՝ Նազիկ Մելիքյան
Որդին՝ Արթուր Մելիքյան

1962–1994


*Ահագանգ ստացվեց, որ դեռ առավոտից ճանապարհ ընկած դատապարտյալներ տեղափոխող մեքենան
կես ճանապարհին խափանվել ու մի կերպ Եղեգնաձոր է հասել:*

Օգնություն շտապող մեքենայի դեկի մոտ տեղավորվեց հենց ավտոծառայության պետը՝ Արսենը:

Կարող էր չգնալ, կարող էր մեկ ուրիշին ուղարկել, մանավանդ որ նոր էր հանձնել հերթապահությունը, բայց որոշումը վճռական էր, պատասխանատվության զգացումը՝ մեծ:

Մահ իմացյալ...

Անդրանիկ Բաբկենի Խաչատրյան



1966 – 1994

Ծնվել է 05.09.1966թ., ք. Հրազդանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1035 զորամասում, որպես 1-ին վաշտի հրաձիգ, ենթասպա

Չոհվել է 13.01.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է ք. Հրազդանում

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով


Կինը՝ Ալվարդ Գալստյան
Որդին՝ Բաբկեն Խաչատրյան
Որդին՝ Գևորգ Խաչատրյան

1992 թվականի օգոստոսին, որպես հրաձիգ, Անդրանիկը ծառայության անցավ ՆԳՆ ԲՊԻ վարչության (այնուհետև՝ ՆՁ) ուղեկցող զնդի 1-ին վաշտում: Ծառայության անցնելուց կարճ ժամանակ անց, Անդրանիկն անդամագրվեց զորամասից սահմանամերձ Գորիս մեկնողների խմբին:

...Հանկարծ թշնամին անսպասելի հարձակման անցավ: Մերոնց պաշտպանական առաջին զիծը մարտի բռնվեց: Այնտեղ էր Արթուրը՝ Անդրանիկի մտերիմն ու զինակիցը: Ազերիների նռնականետը կյանքեր էր խլում: Քիչ անց հասավ Արթուրի խփվելու բոթը: Նահանջը փրկություն էր խոստանում, բայց Անդրանիկն առաջ մղվեց. մտքում միայն ընկերոջ մարմինը թշնամական գերությունից փրկելն էր: Բայց, ավաղ, չհասցրեց մոտենալ, երբ կողքին պայթեց նռնակը... ու նա խոցված ընկավ:

Ես մի զարկն եմ քո կռվի...

Արթուր Բագրատի Կուրդինյան



1972 - 1994

Ծնվել է 22.06.1972թ., ք. Էջմիածնում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գորամասում, որպես ժամկետային զինձառայող, շարքային

Զոհվել է 18.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է ք. Էջմիածնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Բագրատ Կուրդինյան


Ամուսի

*Տղաները զոհվում են: Այդպես է՝ նաև զոհվում են, որովհետև այլ կերպ պատերազմել հնարավոր չէ:
Որդիները ճիշտ են: Հայրերն ու մայրերը ճիշտ են: Իսկ ինչ որ տեղ անողորմ պաղոթյամբ թևածում է արևախումբ սխալը, սակայն, որի համար հողը մեղավոր չէ: Հողի անմահությունը ես այսպես եմ զգում.
«Եթե հայրենիք, ապահովություն և ազատություն ես ուզում, ուրեմն ինձ ամուր պիտի պահես՝ արյուն-քրտինքով »:*

Ծալկայի Ղզրթիլիսա գյուղում կամեցել էր, որ պապի հետ լուսանկարվի: Հիմա լուսանկարը կա: Ծալկայում հայտնի Սոխակն է լուսանկարել: Եվ պապը կա: Հողը կա: Չուրը կա: Արթուրը կա:
...Մայր տաճարի զանգերը դողանջում են...

Փոքր – ինչ ուշացավ...

Աշոտ Երվանդի Մելիքսեթյան



1974 – 1994

Ծնվել է 17.09.1974թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Չոհվել է 09.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում


ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Երվանդ Մելիքսեթյան
Մայրը՝ Չաբել Մելիքսեթյան
Ամուրի

*Նրա անունով գորակոչի ծանուցում այդպես էլ զինկոմիսարիատից չստացվեց: Ինքը չսպասեց:
Աշոտ Մելիքսեթյանը հայրենիքի պաշտպանության զինվորագրվեց իր ազատատենչ ոգու կամքով՝ կամովի, հատուկ
նշանակության գումարտակի կազմում, որին նաև «Չղջիկներ» խորհրդավոր անունն էր տրված:
Աշոտի մարտական ուղին ծայր առավ Մեղրու շրջանի Նյուվաղի գյուղի ինքնապաշտպանական կոմիտեից:
Մարտի 9-ին իրենց խրամատում պայթած թշնամական արկի բեկորների անկանոն ու ցաքուցիր թռիչքը նա փակեց
իր մարմնով՝ մարտական արիության անմոռաց օրինակ դառնալով սերունդների համար:*

*Օ, գոհվածները: Ցնցեք, արթնացրեք նրանց, ցնցեք մինչև սիրտը, որ
քաղվածների ճերմակ շրջագծում գոնե մեկնումենկն արթնանա,
ճշա ու ցնցի լռության ճերմակ նիրհը:*

Լյուդվիգ Ղարիբի Մելքոնյան



1973 – 1994

Ծնվել է 29.06.1973թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գորամասում, որպես ժամկետային
զինծառայող, ավագ սերժանտ

Զոհվել է 11.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռարկուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության համար»
մեդալներով,

Հայրը՝ Ղարիբ Մելքոնյան

Մայրը՝ Լիդա Լազարյան

՝Սձօճ

Սովորել է Երևանի թիվ 194 դպրոցում:


*1992թ.-ին գորակոչվել է Ազգային բանակ, հաջորդ տարվա փետրվարին մասնակցել Քելրաջարի, այնուհետև
սահմանային կորվերին:*

*1993թ.-ի սեպտեմբերին ընդունվել է դեսանտագրոհային քոլեջ, ավարտելուց հետո, ավագ սերժանտի կոչումով,
կրկին շարք վերադարձել... և կրկին մարտական առօրյա, կռիվներ, մարտեր:*

1994թ.-ի մարտի 11-ին զոհվել է մարտական առաջադրանքը կատարելիս:

Ռուսլան Նիկոլայի

Պետրոսյան



1966 – 1994

Ծնվել է 17.10.1966թ., ք. Վանաձորում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1043 զորամասում, որպես գումարտակի վաշտի հրամանատար, կապիտան

Չոհվել է 16.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է

ՀՀ Նախագահի 1998թ. հրամանագրով՝ Արիության մեդալով
ՀՀ ոստիկանության պետի 2006թ. հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալով

Կինը՝ Չարինե Պետրոսյան

Դուստր՝ Անահիտ Պետրոսյան

Որդին՝ Դավիթ Պետրոսյան


Նա սիրում էր լույս, արև, կյանք: Այդ ինչ ուժ էր, որ ստիպեց նրան կամավոր հրաժարվել այդ ամենից:

Երևի հենց սերը դեպի լույսը, արևը, կյանքը: Գրելով հերոսաբար զոհված երիտասարդների մասին, սկսում ես հասկանալ, թե ինչպես է արարվում անվեհերության հրաշքը:

Այս ամենից հետո մենք գիտակցո՞ւմ ենք, արդյոք, մեր անվտանգության գինը:

Անդորրը, խաղաղությունը պետք է պաշտպանել, և բոլորը չէ, որ կրում են իրենց ուսերին այդ պատասխանատվությունը:

Գրիգոր Ավետիսի Յամանյան



1974 - 1994

Ծնվել է 11.09.1974թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 գորամասում, որպես ժամկետային զինձառայող, շարքային

Զոհվել է 26.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.


ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2006թ հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալով

Հայրը՝ Ավետիս Յամանյան
Մայրը՝ Զուլիետա Յամանյան
Եղբարը՝ Խորեն Յամանյան
Ամուրի

*«Գրիգոր Ավետիսի Յամանյանը աչքի է ընկել իր անբասիր վարքով, խիզախությամբ, հայրենասիրությամբ:
Նրա ակտիվ մասնակցությամբ հետ են մղվել թշնամու բազմաթիվ զրոհներ, իսկ 1994 թվականի ապրիլի 26-ին
իր ընկերների կյանքի և անվտանգության համար նա զենքը ձեռքին խոյացել է թշնամու դեմ, պատճառելով նրան կենդանի ուժի զգալի կորուստ:
Հայ քաջորդին հերոսաբար զոհվեց այդ օրը: Այս ամենը նկատի ունենալով՝ միջնորդել Երևանի քաղխորհրդի և Շահումյանի շրջխորհրդի
գործկոմներին՝ հայրենիքի զինվոր Գրիգոր Ավետիսի Յամանյանի հիշատակը հավերժացնելու համար նրա անունով կոչել Երևանի որևէ դպրոց
կամ փողոց»:*

Փառք, պատիվ ու հավերժ հիշատակ մեր փոխարեն զոհված տղաներին...

Մհեր Հրաչիկի Մելքոնյան



Ծնվել է 05.05.1970թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 զորամասում, որպես 3-րդ գումարտակի, 3-րդ վաշտի, 2-րդ դասակի հրամանատար, լեյտենանտ

Զոհվել է 16.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Կինը՝ Հասմիկ Սարգսյան

Որդին՝ Հրաչ Մելքոնյան

1 9 7 0 - 1 9 9 4

*1993 թվականն էր: Տուն, ընտանիք, մասնագիտություն, հետաքրքրություններ ունեցող Մհերին ի՞նչն էր կանչում:
Պատերազմը: Այո: Որովհետև պատերազմում ամեն ոք իր բնագիծն ունի: Զրոնեցիր՝ խոցելի է դառնալու թշնամու համար:
Երազա՞նքը: Անպայման: Որովհետև երազանքի հետևից գնացողն է պայծառ, անանձնական ու բռնկվող-այրվող:
Ու երազանքի հետևից գնալիս էլ բռնկվեց-այրվեց: Ու մնացին ծառայողական բնութագրի ժխատ տողերը.*

«Մեր Հրաչի Մելքոնյանը 1994 թվականի ապրիլի 16-ին ընկավ հերոսի մահով՝ Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս»:

Տա աստված՝ վերջինը լինի հաղթանակի ճանապարհին

Արսեն Լևոնի Սահակյան



1974 – 1994

Ծնվել է 21.07.1974թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 գորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 07.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2000թ հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2006թ. հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալներով

Հայրը՝ Լևոն Սահակյան


Ամուսի

*Պարզապես այն դաժան ժամանակներում ռազմադաշտում ամեն մեկն ուներ իր մականունը:
Այդ մականուններով էին ծանոթանում, այդ մականուններով էլ հերոսանում էին տղերքը:
Արսեն Սահակյանին այդպես էին ասում, քանի որ դեսքով շատ էր նման «Բլեֆ» կինոֆիլմի հերոսին:*

*Արսեն Սահակյանն էլ հերոսացավ և «Եռաբլուրում» նրա շիրմաքարի վրա անճնագրային անունից բացի՝ գրվեց «Բլեֆ» ու ծննդյան, մահվան տարեթվերը՝ «1974-1994»:
Ընդամենը 20 տարի...*

Տոհմական արիություն...

Կարապետ Հակոբի Դելեյան



1958 – 1994

Ծնվել է 12.08.1958թ., ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1041 զորամասում, որպես 3-րդ վաշտի հրամանատար, մայոր

Զոհվել է 03.03.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս
Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 1998թ. հրամանագրով՝ Արիության մեդալով
ՀՀ ոստիկանության պետի 2006թ. հրամանով՝
«Մխրագործության համար» մեդալով

Կինը՝ Անահիտ Դելեյան

Դուստրը՝ Եղիսաբեթ Դելեյան

Որդին՝ Հայկ Դելեյան

Առաջին վավերագրական պատմությունը նախնիների մասին այն էր, որ Կարապետ Դելեյանի պապը 1915 թվականի եղեռնի ժամանակ մեծ-մեծակ կռվել է 20 թուրքի դեմ: Դրա համար էլ իրենք կոչվել են «Դելի»-ներ, «մտենթ»-եր, որտեղից և ձևավորվել է տոհմական ազգանունը:

1989թ. լուսավորության նախարարությունը անհատ մարզիկներից կամավորական ջոկատ կազմեց:

*Կարապետն առաջինն անդամագրվեց: Սեպտեմբերին նա արդեն մասնակցում էր Շահումյանի կռիվներին:
Կարապետի արիությունը սահման չէր ճանաչում:*

Քանի-քանի մահաբեր գնդակներ էին սուրացել նրա կողքով, քանի բնակավայրերի ու անասիկ թվացող դիրքերի գրոհումով հավաստել էր, որ հավատարիմ է Հայրենիքին տված երդմանը:

Ես մի զարկն եմ քո բազկի

Արման Նվերի Հարությունյան



1973 – 1994

Ծնվել է 18.07.1973թ., Աշտարակի շրջանի Ավան գյուղում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 գործառնատուն, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 26.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Աշտարակի շրջանի Ավան գյուղում ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Հայրը՝ Նվեր Հարությունյան

Ամուրի

Այս պատերազմը վաղուց է սկսվել՝ 12-րդ դարից, և ով մտածում է, թե Ղարաբաղով կվերջանա՝ չարաչար սխալվում է: Սա հայի և թուրքի կռիվ է և շարունակվելու է մինչև վերջ: Մինչև պատմական արդարության վերականգնում: Եվ ամեն մի սերունդ այս պատերազմում իր պատմությունն է կերտում: Արագածի փեշին ծվարած Աշտարակի շրջանի Ավան գյուղը 88թ.-ի առաջին զինյալներից էր: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Ինքը էն գլխից էր զինվոր:

... Գյուղում բնակվում են Արևմտյան Հայաստանից 1915 թվականին գաղթածներն ու նրանց սերունդները:

Ես մի բունն եմ քո հողի...

Արթուր Կարապետի Մարգարյան



Ծնվել է 08.12.1973թ. ք.Արովյանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1032 զորամասում, որպես ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 26.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով

Ամուրի


Հայրը՝ Կարապետ Մարգարյան

Մայրը՝ Անժիկ Աբրահամյան

1973 - 1994

... Մեզ հազարամյակների դեգերումից հետո, վերջապես, մի անգամ հնարավորություն է տրված, որ մենք՝ ինքներս, մեր ճակատագիրը մեր զենքով, մեր ուժով պաշտպանենք: Եթե մենք այս անգամ էլ դա չանենք, ապա սա կլինի վերջին անգամ: ... Այս արժիվ տղերքը դա արեցին ու փայլուն արեցին:

Գուրգեն Միմոնի
Գաբրիելյան



1968 – 1992

Ծնվել է 18.02.1968թ. ք.Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆՁ-ում, որպես 4-րդ գումարտակի 1-ին վաշտի, 1-ին դասակի, 2-րդ ջոկի միլիցիոներ, միլիցիայի կրտսեր սերժանտ

Չոհվել է 18.07.1992թ. Մարտակերտում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է «Եռաբլուր» պանթեոնում

Պարգևատրվել է.
ՀՀ Նախագահի 2000թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության, ՀՀ ոստիկանության պետի 2005թ հրամանով՝ «Մխրագործության համար» մեդալներով

Կինը՝ Սիլվա Գաբրիելյան
Որդին՝ Գուրգեն Գաբրիելյան
Դուստրը՝ Լուսինե Գաբրիելյան

Վայրկյանը, ներկա օրերը մեզ չեն ցուցներ միջին ճանապարհի: Վաղվան պատասխանը հայ ժողովրդին պիտի ըլլան այո կամ ոչ:

Դարեր ի վեր մենք բռնեցինք հավաքական ազատության ճանապարհը, որ պսակվեցավ մեր արյունով և հայ երիտասարդության անասելի ոգևորումներով:

Հասած է ժամը վերջին մարտնչումի:

Տղերքը այնտեղ՝ բարձրում մնացին...

Լևոն Էդվարդի
Գաբրիելյան



1974 - 1994

Ծնվել է 02.12.1974թ. ք. Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՀՆԶ-ում, որպես ժամկետային զինծառայող,
շարքային

Զոհվել է 09.03.1994թ. Օսարում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է ք. Երևանում

Պարգևատրվել է.

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով՝ Մարտական ծառայության,
ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հրամանով՝ «Մխրագործության
համար» մեդալներով


Հայրը՝ Էդվարդ Գաբրիելյան
Մայրը՝ Սեդա Գաբրիելյան
Ամուրի

*...Այսօր մեր պետական սահմանը մեր սարերն են, սարերի վրա էլ
մեր փառապանձ տղերքը:*

*Սահմանի այս հատվածը Հայաստանի ՆԳ հատուկ գումարտակի
տղերքն են պահում, մեր միլիցիան...*

Հայրենիք, քո սերը կրակե շապիկ է...

Վաղինակ Ալբերտի Ազատյան



1973 - 1994

Ծնվել է 12.07.1973թ. ք.Երևանում

Ծառայել է ՀՀ ՆԳՆ ՆՁ թիվ 1031 գորամասում, որպես
ժամկետային զինծառայող, շարքային

Զոհվել է 25.04.1994թ. Ֆիզուլիում, ՀՀ սահմանները պաշտպանելիս

Հուղարկավորված է Էջմիածնի շրջանի Գայ գյուղում

ՀՀ Նախագահի 2001թ. հրամանագրով պարգևատրվել է
Մարտական ծառայության մեդալով


Հայրը՝ Վաղինակ Ազատյան

Ամուսի

